4 մայիսի 2006 թվականի N 584-Ն

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Համաշխարհային բանկի միջև աղքատության կրճատմանն աջակցության երկրորդ վարկի առաջընթացն ապահովելու միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 939-Ն որոշմամբ հաստատված՝ աղքատության կրճատմանն աջակցության առաջընթացն ապահովելու 2005 թվականի որոշ միջոցառումների ծրագրի 48-րդ կետի պահանջը գյուղական ենթակառուցվածքների զարգացման վերաբերյալ, որն օժանդակող ֆինանսավորման մեխանիզմով նպատակ ունի ապահովելու համընդհանուր մատչելիություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել գյուղական համայնքների անապահով ընտանիքների գազամատակարարման ապահովման միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության մարզպետներին տրամադրել սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, այդ թվում՝ նպաստառու ընտանիքների ցուցակները:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին՝
ա) գյուղական համայնքների անապահով ընտանիքների հաշվառման, նրանց գազամատակարարման ներտնային համակարգերի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական աջակցության գնահատման նպատակով ստեղծել աշխատանքային խմբեր՝ համապատասխան մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի ներկայացուցիչների ներգրավմամբ.
բ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների հետ համատեղ ամփոփել սույն որոշման 3-րդ կետի համաձայն ստեղծված աշխատանքային խմբերի կողմից կազմված և հաստատված նյութերն ու սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն գյուղական համայնքների անապահով ընտանիքների գազամատակարարման ներտնային համակարգերի կառուցման համար ֆինանսական աջակցության հնարավոր աղբյուրների և աջակցության կազմակերպման մեխանիզմների վերաբերյալ:

4. Սահմանել, որ գնահատումների վերաբերյալ աշխատանքային խմբերի կողմից կազմված ցուցակները հաստատվում են համապատասխան մարզպետի կողմից և ներկայացվում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

5. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարին՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության գազամատակարարման վերականգնման և գազիֆիկացման տարեկան ծրագրերի կազմման ժամանակ հաշվի առնել սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի գազիֆիկացման առաջնահերթության անհրաժեշտությունը:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին համապատասխան փոփոխություն կատարել բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում՝ նպատակ ունենալով հնարավորություն ընձեռել մատակարարին գյուղական համայնքների անապահով ընտանիքների գազամատակարարման աշխատանքները կատարել առանց գազամատակարարման համար կանխավճար գանձելու:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: